

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 9

### ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի 2015թ. փետրվարի 17-ի նիստի

Խորհրդի 32 անդամներից ներկա էին 25-ը: Նախագահում էր խորհրդի նախագահ Գ. Ղազինյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար Է. Շաթիրյանը: Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը քվեարկության դրեց օրակարգը, որը միաձայն հաստատելուց հետո խորհուրդն անցավ օրակարգային հարցի քննարկմանը (օրակարգը կցվում է):

#### ՕՐԱԿԱՐԳ.

1. *Գիտական հաղորդում:*
2. *Քրեական իրավունքի ամբիոնի հաշվետվությունը՝ ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին (զեկ.՝ ամբիոնի վարիչ, պրոֆ. Ա. Գաբուզյան):*
3. *«Քաղաքացիական իրավունք և դատավարություն» ու «Քրեական իրավունք և դատավարություն» մագիստրոսական ծրագրերով 2014-2015թթ. ուսումնական տարում հեռակա ուսուցման գծով մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքների մասին հաշվետվությունների ներկայացում (զեկ.՝ մասնագիտական քննական հանձնաժողովների նախագահներ՝ ՀՀ վճարեկ դատարանի դատավոր Վ. Արեւյան, ՀՀ վճարեկ դատարանի քրեական պալատի նախագահ Դ. Ավետիսյան):*
4. *Ֆակուլտետի առկա ուսուցման բաժնում ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի վիճակի մասին (զեկ.՝ ամբիոնների վարիչներ):*
5. *2014-2015 ուս. տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի ընթացքի և արդյունքների ամփոփում (զեկ.՝ դեկանի տեղակալ, պրոֆ. Հ. Խաչիկյան):*
6. *Ընթացիկ հարցեր:*

1. **ԼՍԵՑԻՆ.** Գիտական հաղորդում. «Միերի դռան» ուրարտական արձանագրությունը. հայերեն ընթերցանությունը և իրավական նշանակությունը» (զեկ.՝ պրոֆ. Ա. Վաղարշյան):

Զեկուցողն ընդհանուր գծերով անդրադարձավ «Միերի դռան» ուրարտական արձանագրության հայերեն ընթերցանության հետ կապված և դրա իրավական նշանակությանը վերաբերող մի շարք հարցադրումների:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Ն. Այվազյանը, Գ. Հովսեփյանը, Դ. Ավետիսյանը և Ս. Մեղրյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հաղորդումն ընդունելի գիտություն:

Հաղորդումը կցվում է արձանագրությանը:

**2. ԼՄԵՑԻՆ.** Քրեական իրավունքի ամբիոնի հաշվետվությունը՝ ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին (զեկ.՝ ամբիոնի վարիչ, պրոֆ. Ա. Գաբուզյան):

Զեկուցողը համակարգված տեսքով ներկայացրեց տեղեկատվություն ամբիոնի կողմից կատարված ուսումնական և ուսումնամեթոդական աշխատանքների, այդ թվում՝ դասավանդման մեթոդաբանության, գիտելիքների ստուգման և գնահատման ձևերի, կառուցակարգերի կատարելագործման, ուսումնական և ուսումնասօժանդակ նյութերի արդիականացման, ինչպես նաև գիտահետազոտական աշխատանքի, այդ թվում՝ ամբիոնի անդամների հրատարակումների, գիտաժողովներին և գիտահետազոտական ծրագրերին նրանց մասնակցության վերաբերյալ:

Անդրադարձ կատարվեց նաև ամբիոնի՝ ուսանողների հետ տարվող աշխատանքներին, կադրերի պատրաստման հարցերին, ինչպես նաև ամբիոնի աշխատանքում արձանագրված որոշ թերություններին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Գ. Ղազինյանը և Հ. Խաչիկյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Քրեական իրավունքի ամբիոնի հաշվետվությունը գնահատել լավ:  
Հաշվետվությունը կցվում է արձանագրությանը:

**3. ԼՄԵՑԻՆ.** «Քաղաքացիական իրավունք և դատավարություն» ու «Քրեական իրավունք և դատավարություն» մագիստրոսական ծրագրերով 2014-2015թթ. ուսումնական տարում հեռակա ուսուցման գծով մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքների մասին հաշվետվությունները (զեկ.՝ մասնագիտական քննական հանձնաժողովների նախագահներ՝ ՀՀ վճռաբեկ դատարանի դատավոր Վ. Աբելյան, ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ Դ. Ավետիսյան):

Զեկուցող Վ. Աբելյանն, անդրադառնալով «Քաղաքացիական իրավունք և դատավարություն» մագիստրոսական ծրագրով մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքներին, ներկայացրեց թվային ամփոփ ցուցանիշներ՝ նշելով, որ նախորդ տարիների համեմատ արձանագրվել է ընդհանուր վիճակի որակական առումով վատթարացում: Միաժամանակ, նշվեց, որ հեռակա ուսուցման բաժնում մագիստրոսական թեզերի մակարդակը որակական առումով զգալիորեն զիջում է առկա ուսուցում անցած մագիստրանտների ներկայացրած թեզերի մակարդակին: Զեկուցողը մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքներն ընդհանուր առմամբ գնահատեց բավարար:

Զեկուցող Դ. Ավետիսյանն, անդրադառնալով «Քրեական իրավունք և դատավարություն» մագիստրոսական ծրագրով մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքներին, նշեց, որ նախորդ տարիների համեմատ արձանագրվել է ընդհանուր վիճակի որակական առումով բարելավում:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Խորհրդի նախագահ Գ. Ղազինյանը, կիսելով ներկայացված մտահոգությունները, թվարկեց մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններ, որոնք ազդեցություն

են ունեցել ընդհանուր պատկերի վրա:

Արտահայտվեցին նաև Վ. Ավետիսյանը և Հ. Խաչիկյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Ներկայացված հաշվետվությունները գնահատել դրական:

Հաշվետվությունները կցվում են արձանագրությանը:

**4. ԼՍԵՑԻՆ. Ֆակուլտետի առկա ուսուցման բաժնում ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի վիճակի մասին հարցը (զեկ.՝ ամբիոնների վարիչներ):**

Ամբիոնների վարիչները, ներկայացնելով տեղեկատվություն ֆակուլտետի առկա ուսուցման բաժնում ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի վիճակի վերաբերյալ, նշեցին, որ մագիստրոսական թեզերի հետ կապված վիճակն ընդհանուր առմամբ բարվոք է: Ավարտական աշխատանքների հետ կապված, առկա են որոշ խնդիրներ, որոնց կապակցությամբ ամբիոնների վարիչները հույս հայտնեցին, որ դրանք սեղմ ժամկետներում կստանան իրենց լուծումը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Խորհրդի նախագահ Գ. Ղազինյանն ամբիոնների վարիչներին հանձնարարեց հետևողականություն դրսևորել ֆակուլտետի առկա ուսուցման բաժնում ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի սահմանված ժամկետներում (մինչև սույն թվականի մարտի 30-ը) ներկայացման հարցում:

Արտահայտվեցին նաև Վ. Ավետիսյանը և Հ. Խաչիկյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Ամբիոնների վարիչների հաղորդումները ֆակուլտետի առկա ուսուցման բաժնում ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի վիճակի մասին ընդունելի գիտություն:

**5. ԼՍԵՑԻՆ. 2014-2015 ուս. տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի ընթացքի և արդյունքների ամփոփման հարցը (զեկ.՝ ղեկանի տեղակալ, պրոֆ. Հ. Խաչիկյան):**

Զեկուցողը ներկայացրեց 2014-2015 ուս.տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի ընթացքի վերաբերյալ տեղեկատվություն և դրա ամփոփ արդյունքները: Ըստ այդմ՝ նախքան առաջին լուծարքային շրջանը պարտք ունեցող ուսանողների և մագիստրանտների թիվը կազմում էր համապատասխանաբար՝

1-ին կուրս (181 ուսանող) – 85

2-րդ կուրս (157 ուսանող) – 74

3-րդ կուրս (166 ուսանող) – 100

4-րդ կուրս (68 ուսանող) – 37

1-ին տարվա մագիստրանտներ (45) - 4

2-րդ տարվա մագիստրանտներ (52) - 1:

Առաջին լուծարքային շրջանից հետո պարտք ունեցող ուսանողների և մագիստրանտների թիվը կազմում է համապատասխանաբար՝

- 1-ին կուրս (181 ուսանող) – 46
- 2-րդ կուրս (157 ուսանող) – 51
- 3-րդ կուրս (166 ուսանող) – 76
- 4-րդ կուրս (68 ուսանող) – 25
- 1-ին տարվա մագիստրանտներ (45) - 1
- 2-րդ տարվա մագիստրանտներ (52) - 1:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Գ. Ղազինյանը, Վ. Ավետիսյանը և Ս. Դիլբանդյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** 2014-2015 ուս. տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի ընթացքի և արդյունքների ամփոփման մասին հաղորդումն ընդունելի գիտություն:

## **6. ԸՆԹԱՑԻՎ ՀԱՐՑԵՐ**

**6.1. ԼՍԵՑԻՆ.** Քաղաքացիական իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Շուշանիկ Ղուկասյանի ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Վ. Ավետիսյանը և Ա. Հայկյանցը:

### **ՈՐՈՇԵՑԻՆ.**

**Ա.** Հաստատել ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Շուշանիկ Ղուկասյանի՝ «Ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների թերությունների հետևանքով պատճառված վնասի հատուցման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությամբ» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.03 - «Մասնավոր իրավունք (քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք)»:

**Բ.** Գիտական ղեկավար հաստատել ի.գ.թ., դոց. Գ. Բեքմեզյանին:

**Գ.** Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

**6.2. ԼՍԵՑԻՆ.** Քաղաքացիական իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի դոցենտ, իրավ. գիտ. թեկ. Գրիգոր Բեքմեզյանին ԺԲ.00.03 - «Մասնավոր իրավունք (քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք)» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսություն ղեկավարելու թույլտվություն ստանալու համար ՀՀ ԲՈՀ-ին միջնորդելու հարցով:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Վ. Ավետիսյանը և Ա. Հայկյանցը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հաշվի առնելով Քաղաքացիական իրավունքի ամբիոնի միջնորդությունը, ինչպես նաև այն հանգամանքը, որ Գրիգոր Բեքմեզյանն ունի 20-ից ավելի հրատարակված գիտական աշխատանքներ՝ դիմել ԵՊՀ ռեկտորատին՝ միջնորդել ՀՀ ԲՈՀ-ին թույլատրել ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական իրավունքի ամբիոնի դոցենտ Գրիգոր Բեքմեզյանին ղեկավարել ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Շուշանիկ Ղուկասյանի՝ «Ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների թերությունների հետևանքով պատճառված վնասի հատուցման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությամբ» վերտառությամբ թեկնածուական ատենախոսությունը, ԺԲ.00.03 - «Մասնավոր իրավունք (քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք)» մասնագիտությամբ:

**6.3. ԼՍԵՑԻՆ.** Քաղաքացիական իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի դոցենտ, իրավ. գիտ. թեկ. Գրիգոր Բեքմեզյանին ԺԲ.00.03 - «Մասնավոր իրավունք (քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք)» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսություն ղեկավարելու թույլտվություն ստանալու համար ՀՀ ԲՈՀ-ին միջնորդելու հարցով:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Վ. Ավետիսյանը և Ա. Հայկյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հաշվի առնելով Քաղաքացիական իրավունքի ամբիոնի միջնորդությունը, ինչպես նաև այն հանգամանքը, որ Գրիգոր Բեքմեզյանն ունի 20-ից ավելի հրատարակված գիտական աշխատանքներ՝ դիմել ԵՊՀ ռեկտորատին՝ միջնորդել ՀՀ ԲՈՀ-ին թույլատրել ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական իրավունքի ամբիոնի դոցենտ Գրիգոր Բեքմեզյանին ղեկավարել Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի իրավաբանական ֆակուլտետի քաղաքացիական և քաղաքացիական դատավարության իրավունքի ամբիոնի ասպիրանտ Նոնա Գալստյանի՝ «Անհիմն հարստացման հետևանքով ծագող պարտավորություններ» վերտառությամբ թեկնածուական ատենախոսությունը, ԺԲ.00.03 - «Մասնավոր իրավունք (քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք)» մասնագիտությամբ:

**6.4. ԼՍԵՑԻՆ.** Պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի ասպիրանտ Տիգրան Ղազարյանի ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Ա. Վաղարշյանը և Գ. Ղազինյանը:

### **ՈՐՈՇԵՑԻՆ.**

**Ա.** Հաստատել ամբիոնի ասպիրանտ Տիգրան Ղազարյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ «Դրական իրավունքի օրյեկտիվության հիմնախնդիրները» վերտառությամբ, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ. 00.01 «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն»:

**Բ.** Գիտական ղեկավար հաստատել ի.գ.դ., պրոֆ. Ա. Վաղարշյանին:

**Գ.** Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

**6.5. ԼՍԵՑԻՆ.** Պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի ասպիրանտ Կարեն Ամիրյանի ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Ա. Վաղարշյանը և Գ. Ղազինյանը:

### **ՈՐՈՇԵՑԻՆ.**

**Ա.** Հաստատել ամբիոնի ասպիրանտ Կարեն Ամիրյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ «Պետական իշխանության հանրային իրավական պատասխանատվությունը ժամանակակից իրավունքում և դրա կենսագործման հիմնախնդիրները» վերտառությամբ, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ. 00.01 «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն»:

**Բ.** Գիտական ղեկավար հաստատել ի.գ.դ., պրոֆ. Գ. Հարությունյանին:

**Գ.** Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

**6.6. ԼՍԵՑԻՆ.** Սահմանադրական իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ Արցախի պետական համալսարանի Իրավունքի ամբիոնի հայցորդ Սոսի Ալեքսանյանի ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Ն. Այվազյանը և Գ. Դանիելյանը:

### **ՈՐՈՇԵՑԻՆ.**

**Ա.** Հաստատել Արցախի պետական համալսարանի Իրավունքի ամբիոնի հայցորդ Սոսի Ալեքսանյանի՝ «Մարդու իրավունքների պաշտպանության հիմնախնդիրները չճանաչված պետություններում (Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրինակով)» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ,

մասնագիտությունը՝ ԺԲ.00.02 «Հանրային իրավունք - սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում»:

**Բ.** Գիտական ղեկավար հաստատել ի.գ.թ., դոց. Վ. Այվազյանին:

**Գ.** Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

**6.7. ԼՍԵՑԻՆ.** Քաղաքացիական դատավարության ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի հայցորդ Հայկ Հովհաննիսյանի ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Ս. Մեղրյանը և Ա. Հայկյանցը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

**Ա.** Հաստատել ամբիոնի հայցորդ Հայկ Հովհաննիսյանի՝ «Արբիտրաժային վճիռների վիճարկման վարույթի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.04 «Դատավարական իրավունք – դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն»:

**Բ.** Գիտական ղեկավար հաստատել ի.գ.թ., դոց. Վ. Հովհաննիսյանին:

**Գ.** Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

**6.8. ԼՍԵՑԻՆ.** Քաղաքացիական դատավարության ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի ասպիրանտ Տիգրան Խաչիկյանի ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Ս. Մեղրյանը և Գ. Ղազինյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

**Ա.** Հաստատել ամբիոնի ասպիրանտ Տիգրան Խաչիկյանի՝ «Մաքսային հսկողության իրավական հիմքերը Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.02 «Հանրային իրավունք - սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում»:

**Բ.** Գիտական ղեկավար հաստատել ի.գ.թ., դոց. Է. Շաթիրյանին:

**Գ.** Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

**6.9. ԼՍԵՑԻՆ.** Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի ասպիրանտ Մհեր Մկրտչյանի թեկնածուական ատենախոսության թեմայի վերտառության ճշգրտման մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Վ. Քոչարյանը և Կ. Գևորգյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

**Ա.** Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի ասպիրանտ Մհեր Մկրտչյանի թեկնածուական ատենախոսության թեմայի վերտառությունը հաստատել «Միջազգային քրեական դատարանների արդարադատական գործունեության առանձնահատկությունները և դրանց ակտերի նախադեպային նշանակությունը» խմբագրությամբ, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.06 - «Միջազգային իրավունք»:

**Բ.** Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

**6.10. ԼՍԵՑԻՆ.** Պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Անի Վարդանյանի ատեստավորման հարցը:

Պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի վարիչ, պրոֆ. Ա. Վաղարշյանը ներկայացրեց ամբիոնի որոշումը՝ ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Անի Վարդանյանին ատեստավորելու վերաբերյալ՝ հայցելով Խորհրդին հաստատել այն:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Գ. Ղազինյանը և Հ. Խաչիկյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Անի Վարդանյանը տպագրության է հանձնել մեկ հոդված, մասնակցում է անհատական պլանով նախատեսված դասընթացներին և աշխատում է ատենախոսական հետազոտության վրա՝ ատեստավորել նրան:

**6.11. ԼՍԵՑԻՆ.** ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի միջնորդությունը Քաղաքացիական իրավունքի ամբիոնի դոցենտ, իրավ. գիտ. թեկ. Արփինե Հովհաննիսյանի «Անշարժ գույքի իրավական կարգավորման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ մենագրությունը տպագրության երաշխավորելու մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Գ. Ղազինյանը և Վ. Ավետիսյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հաշվի առնելով Քաղաքացիական իրավունքի ամբիոնի 2015 թվականի փետրվարի 16-ի նիստի թիվ 5 արձանագրությամբ հաստատված միջնորդությունը և



Ֆակուլտետի մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը՝ Քաղաքացիական իրավունքի ամբիոնի դոցենտ, իրավ. գիտ. թեկ. Արփինե Հովհաննիսյանի «Անշարժ գույքի իրավական կարգավորման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ մենագրությունը երաշխավորել տպագրության:

*Խորհրդի նախագահ*

*Գ. Ղազինյան*

*Խորհրդի քարտուղար*

*Է. Շաթիրյան*